ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ – Հաճախման տեղեկատվություն ԲԴՄՇ-ի աշակերտների և ծնողների համար

Կատարու՞մ են ուսուցիչները ներկա և բացակա:

Այո, ուսուցիչները նշում են աշակերտների ներկայությունը և նշում «A» տառով, եթե աշակերտը ներկա չի գտնվում երկուշաբթիից մինչև հինգշաբթի ուղիղ եթերով դասավանդման ընթացքում:

Ինչպե՞ս է համացանցային դասավանդումից քաղվում աշակերտի ներկայությունը:

Աշակերտը պետք է լրացնի Գուգլ ներկայության փաստաթուղթը (Google Attendance Form), (այն տեղադրված է աշակերտի Գուգլ դասասենյակում) երկուշաբթիից մինչև ուրբաթ:

Մինչև ժամը քանիսը՞ կարող ենք նշել հաճախումը համացանցային ուսուցման ընթացքում:

Հաճախման օրը մինչև գիշեվա ժամը 11:59-ը:

Ինչպե՞ս կարող ենք հարգելի բացակայություն ստանալ:

Նույն կերպ, ինչպես ավանդական ուսուցման մոդելի ընթացքում: Ծնողները, 3 օրվա ընթացքում, պետք է դպրոցին հայտնեն երեխայի բացակայությունը (էլեկտրոնային նամակով, դպրոցի հաճախման էլեկտրոնային նամակով, հեռախոսով և այլն): Խնդրում ենք օգտվել երեխայի դպրոցի կայքից, որպեսզի տեղեկանաք, թե էլեկտրոնային փոստի որ հասցեին ուղարկեք ձեր գրությունը:

Որո՞նք են ԲԴՄՇ-ի հաճախման սպասելիքները:

Այժմ, ավելի քան երբևէ, աշակերտներին հարկավոր է ցուցաբերել հետևողականություն և կենտրոնացում: Նրանք պետք է ներկա գտնվեն համացանցային ուղիղ եթերով տրված բոլոր դասերի ընթացքում և լրացնեն Գուգլ հաճախման փաստաթուղթը ամեն օր կեսօրից հետո կամ երեկոյան:

Ի՞նչ կլինի, եթե աշակերտը բաց թողնի ուղիղ եթերի կամ հեռակա ուսուցման դասը:

Դպրոցական մեր շրջանը հասկանում է, որ հաջողության և ուսուցման բանալին հետևողական հաճախումն է: Դպրոցի աշխատակիցները կապ կհաստատեն միշտ բացակայող աշակերտների հետ, որպեսզի անհրաժեշտ աջակցություն ցուցաբերեն: Կալիֆոռնիայի նահանգի պարտադիր հաճախման օրենքները գործում են, և եթե աշակերտը ուսումնական տարվա դասերի 10%-ից շատ բացակայի, ապա ԲԴՄՇ-ն պարտավոր է միջամտել և աջակցել աշակերտին բարելավել հաճախումը:

Նշվում է՞ ուրբաթ օրվա հաճախումը:

Այո, ձեր երեխան պետք է նշի իր հաճախումը Գուգլ դասասենյակի հաճախման բաժնում, երբ հանձնարարություն է կատարում ուրբաթ օրերին:

Ինչպե՞ս կարող եմ ստուգել երեխայի հաճախումները:

Բոլոր ծնողներին հասանելի է ծնողական պորտալ կայքը, որտեղ զետեղված են հաճախումները:

Որո՞նք են հաճախման նոր կոդերը, որ դուք կհանդիպեք ծնողական պորտալ կայքում:

D Չի մասնակեցլ հեռակա ուսուցման ընթացքում

E Մասնակցել է հեռակա ուսուցման ընթացքում

F Ուրբաթ օրը չի մասնսկցել հեռակա ուսուցման ընթացքում

J Առցանց չի մասնակցել, բայց կատարել է աշխատանք